ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԱԷՄԳ ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԻՆ

Ապրիլի 18-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ատոմային էներգիայի միջազգային գործակալության (ԱԷՄԳ) գլխավոր տնօրեն Յուկիյա Ամանոյին՝ ուղեկցությամբ ՀՀ Էներգետիկայի եւ բնական պաշարների փոխնախարար Արեգ Գալստյանի:

Հանդիպմանը Նորին Սրբությունը ողջունեց Ատոմային էներգիայի միջազգային գործակալության եւ Հայաստանի Հանրապետության միջեւ ձեւավորված համագործակցությունը՝ ուղղված Մեծամորի ատոմակայանի անվտանգ շահագործմանը: Վեհափառ Հայրապետը կարեւորեց ԱԷՄԳ առաքելությունը ատոմային էներգետիկայի զարգացման եւ դրանից բխող զանազան վտանգների կանգարիելման մեջ՝ բարի արդյունավորում մաղթելով գործակալության աշխատանքներին:

Զրույցի ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսն անդրադարձավ նաեւ միջուկային էներգիայի վտանգներին, մասնավորապես վերջերս Ճապոնիայում արձանագրված ողբերգական միջադեպին: Վեհափառ Հայրապետը հույս հայտնեց, որ ԱԷՄԳ ջանքերի արդյունքում կնվազեն այդօրինակ վտանգները, իսկ մարդկությունը կգտնի այլընտրանքային միջոցներ՝ իր կյանքի առաջընթացը երաշխավորելու համար:

Վերջում Վեհափառ Հայրապետը վերստին իր գնահատանքը հայտնեց գործակալությանը բոլոր այն ջանքերի համար, որոնք ներդրվում են ի նպաստ Հայաստանի ատոմային էներգետիկայի զարգացման:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՌՈՒՄԻՆԻԱՅԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ

Ապրիլի 21-ին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ռումինիայի մշակույթի եւ ազգային ժառանգության նախարար Հունոր Կելեմենին:

Ողջունելով նախարարի այցը Հայաստան եւ Մայր Աթոռ՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը գոհունակությամբ արձանագրեց, որ երկու ժողովուրդների միջեւ ձեւավորված դարավոր բարեկամությունը շարունակում է ամրապնդվել շնորհիվ երկու պետությունների արդյունավետ գործակցության: Անդրադառնալով ռումինահայ համայնքին՝ Վեհափառ Հայրապետն ուրախությամբ հաստատեց, որ այսօր հայ համայնքը կարողանում է ազատորեն կազմակերպել իր ազգային-հոգեւոր կյանքը, իսկ համայնքի ներկայացուցիչները ներգրավված են երկրի կյանքի բոլոր ոլորտներում: Այս առիթով Նորին Սրբությունն ի դեմս նախարա-